

Հայածուռւմ է հայ տէրտէրը՝ հաւատարիմ իր կոչման ,
 Հայածուռւմ է հայ տաճարը իր զարդերով սրբազան ,
 Հայածուռւմ է հայ պատանին երկրէ երկիր տարազիր ,
 Հայածուռւմ է հայ մըշակը իր որդւոց հետ սրգակիր ,
 Հայածուռւմ են մատաղանս եւ որբացած հայ մանկունք ,
 Չունին նորանք հայր ու մայրիկ , անվերջ թափում են արտասուք ,
 Հայածուռւմ է եւ պատիւը պարկեշտաւուն հայ կոյսի ,
 Էլ տէրը չէ նա սիրտուն , քաջ , արդամարդ իր փառի ,
 Վերացել է հայ աշխարհից ե՛ւ սրբութիւն ե՛ւ ամօթ ,
 Պատուաճանաչ մարդիկ այնտեղ մահուան քաջում են կարօտ ,
 Որոացուել է Ամանորի պաշտամունքը ցնծալից , —
 Ա՛խ , ո՞վ կարող է աչք բանալ այլ եւս արիւն արտօսելից , —
 Եւ երբեքը հայ աշխարհի՝ մրտալ թախիծը դէմքին՝
 Պատմում է իր հայրենիքի ցաւն ու վիշտը ամէնքին ,
 Այսարհնե՛ր է թափառում նա , կտրում է ծով , ովկէան ,
 Որ իր ողորով ու հրգերով քար սիրտն յուզէ մարդկութեան :

Օ՛հ , սիրելի՛ հայ աղջիկներ , եւ դուք , Հայո՛ց պատանիք ,
 Թէ սիրում էք , որ նորոգուի ձեր կիսաւեր հայրենիք ,
 Թէ սիրում էք , որ դարերով անմահ մընայ ձեր անուն ,
 Ուխտեցէք արդ նորան մի օր զոհել ձեր սիրտն ու արիւն :

Դաւրեժ

ՄԵՍՐՈՊ Վ. ՄԱԿՍՈՒՏԵԱՆ



Մայրութեան յաղթանակը

(Նուեռ հայ մայրերին)

I.

Հայածուռւմ էր Հրէութիւնը եգիպտոսում :
 Երկու հարիւր տարուց աւելի էր անցել այն
 ժամանակից , երբ աշուտը սովր պաճառում էր
 աւեր դարձնել եգիպտոս , եւ երբ Յովսէփ իր
 հետաւեւ մտնով գլուխացոյց Փարւոնին պայտ
 ու պատշաճ միջոցներ-նախաճողութիւններ ձեռք
 առնելու ու սովի դէմ պաշտպանուելու :

Մտացել էին Յովսէփի ժաշան գործունէ-
 ութիւնը , խոմարանների կառուցումը , առա-
 տութեան տարիներում հաց ամբարներ , սովի

տարիներում ժողովրդին հաց բաշխելը , սովից
 ազատելը : Մոռացուել էին նաեւ Յովսէփի շի-
 նած չրանդը եւ սրա մատուցած անգնահատելի
 ծառայութիւնները :

Հրէական ազգն իր խաղաղ զարգացումով ,
 իր աշխատարութեամբ , իր ընտանեկան բար-
 գաւաճութեամբ , իր բազմամիութեամբ , իր
 մաքր արութեամբ , եգիպտական պարարտ հողի
 վրայ զօրացել էր ու առաջացել :

Տիրապետող տարրը՝ Նդիպացիք օր օրի
 վրայ նախանձով էին լցւում , ատելութիւնները
 կրկնապատկում ու բացարձակ բողոքի ու արժ-
 գոնութեան ձայնը էին իրենց չուրջը տարա-
 ծում , արքունիքը հասցնում ու սրա ուշադրու-
 թիւնը հրաւիրում :

Փարաւոնի արքունիքը անտարբեր չ'մնաց
 դէպի այդ ձայները , դէպի բողոքները : Հրա-
 հանգ հրահանգի յետեւից , հրաման հրամանի
 յետեւից սողաղցին մէկը միւսից խիստ , մէկը
 միւսից դաժման հրէական ազգի իրաւունքները
 կարճեցնել , զարգացման առաջն առնելու մտա-
 ջով :

Եգիպտական կառավարութիւնն օր օրի վր-
 այ առաջանալով , պարզից իր նպատակը՝ իս-

պառ Գնջեկ հրէական տաւրը , ինչ միջոցներով
ևս լինէր :

Մայրենի չկամութիւնը, բռնի ուժը, իշխանական անարարութիւնը իրենք բոլոր զինքներով ծանրացել էին հրէաների վրայ, բայց հրէական սուր միջոց, յամուռ աշխատանքային շրջան, բնութանկան ամուր կազմաւորութիւնը եւ տոկոսն ճանաչողութիւնը կարողանալու էին ելք ու հնար գտնել նեղ պարագայներով անցնելու:

Մաքառումն ահաւոր կերպարանք ընդունեց:
Լարեց Փարաւոն իր բոլոր ուժերը, հանդէս
հանեց իր բռնակալ-անխիղճ հրամանները:

Հալածանք, զրկանք, անարգանք, չարչարանք, պատիժ, բանս ու մահ եղան հրէականն ազգի բաժինն ու վիճակը :

Կադաճիւր էին չինուում, բուրգեր էին կա-
ռուցւում, եւ այս ամենի մէջ ծանր ու դժ-
ուարին մասերը, վտանգաւոր դրոճերը, ուժից
վեր բեռները, անդադրում ու կհնամամալ աշ-
խատանքները՝ հրէային էր միայն ու հրէա-
յան . . .

Զրաւակոնադատ յայդ ամենով, անօրէն Փա-
րուտն հրաման հանեց երկուների իսկ ժամերին
խնդրելու-սպաննելու արու ծնւող հրէայ մա-
նուկներին :

Հրեական ազգի չափանշան արու. սևոր գա-
տապարտուած էր ամենատեսակ տանջանքների
ու. զրկանքների, իսկ նոր ծնւող արու. սևոր
իրաւունք չ' ունէր աշխարհ գալու :

Հրեայ մայրը դատապարտուած էր երկուների
ցաւերից, երկուների կալիճներից չամոքեա՞ծ՝
սրտւ ծնած զաւակի սպանման գառնագոյնից-
աւու ու կսկիծով մորմնը ելու-խորտ/ւելու :

Հրէայ մայրութիւնը զրկուած էր արու գաւաի սնուցանելու իրաւունքից :

11

Հրէսուհու մէկը արու զաւակի մայր դար-
ձաւ :

Հրէական բոլոր հնարապետութիւնն և զգուշութիւնն ձեռք առնելով, միայն կրեք ամիս կարողադաւ պահել նրան թաղատի մէջ :

Սիրուն էր մանուկը . կայստառ էր նա . աչքերի մէջ ահազին ապագայ էր փայլում: Մայրը այլ եւս հնար չուներ ծածկելու նա պիտի բաժանուէր իր զաւակից , նա պիտի ոչնչացնէր նրան . . .

Թշուառ մայրը մի կողով լինեց, ձիւթով ու նաւթով ծեփեց եւ իր հոգեհատորիկ մանկիկը այդ կողովի մէջ դրեց ու տալու իր աղի աղբուղանքները նեղուրի կոհակներին միտխաւանւում, չնայ ցոյսը պիտոյն, նրա արթններին, նրա հոտաւոր յանձնեց . . .

Երկրում էր կողովը ջրի երեսին ու կամայի
կամայ ավերից հեռանում . . . իսկ մա՞յրը . . .
Փեռի ավիրն , եղնուսների մէջ պահուած ակն
դէտ նայում էր օւ լալիս . . . Լալիս էր եղբոր

կորուստը եւ վշտաբեկ մօր ձեռքից բռնած փռ-
քրիկ Մարիամը . . .

«Գտնադիմ փյաւ ալդ ժափին Փարսաճին աղ-
ջիկը իր նաժիշաներով : Եկաւ Ներսիսը մէջ լու-
սադեղուելու, տեսաւ. գետի երեւոյն երեքըլլա-
ղովը, հրամայեց հանդի ահ : Հանձնեցին-բացին
եւ մէջը գտան մի սիրուն տղայ, որ լալիս էր
անհանգիստ, . . Փարսաճին աղջիկը գլխաւ հը-
նէ իմացաւ որ իր անգութ հօր հրամաններէն իր-
զոց է նա. — «Երեւոյն մահուկ է» բացազան-
շեց ու, երեքիսին սիրունութիւնը նկատելով,
յիսին որդեգիր ընդունեց :

Եղբոր փրկուած լինելու ուրախութեամբ զօրացած, փոքրիկ Մարիամը համարձակութեամբ առաւ, մօտ վազեց ու հրէական նրբամտութեամբ յայտնեց, որ այնտեղ, շատ մօտերում նա մի ծածօր տեղ գիտէ . երէկ հաճի արքայադուստրը՝ ինքն իսկոյն կը կանչէ նրան երեխայն իմ ծած տալու :

Հաճութիւնը տրուեց :

Թաւ սիրա ի բերան վաքրիկ հրէաշին եւ
իր մօրը բերեց :

Փարսւտիկ դուռարը յանձնեց իր որդեգիրը
հրէւհուն եւ , յատուկ վարձ նշանակելով ,
մինչեւ ծծից կտրելը իր համար պահել-մեծացնել
հրամայեց :

Եւ այսպէս հարազատ մայրը իր որդուն ծըծ-
մայր կարդուած, Եւոյլային օրհնութիւններ վեր
ուղղելով, իր աղջկայ հետ զվոտ նեղոսի ափից
իր աունը շտապից զաւակը գրկին :

III

Հասաւ ծծից կտրելու ժամանակը եւ ստըն-
տու մայրն առաւ մանուկն ու տալաւ. փառա-
ւոնի աղջկանը յանձնեց :

Փարաոնին ազնվաբան մանուկն իր մօտ, իր աշխարհիկին բնութանց, առաջիկ նրան «Մոգ-սէս» (Ջրից հանուած) անունը եւ նոյն հրէական անուն իր արքայունեղ մէջ իր որդեգրին պահող-պահւումն ու կարգը :

Անուամմանում էր մանուկն Մովսէս, ար-
քայադասուր խնամրի տակ Փարաւոնի արքունիքի
մէջ, փափուկ գլուանքներով եւ ամեն տեսակ
ճոխութիւններով չղապատած:

երկրի նշանաւոր գիտնականները ուսուցիչներ կարգուեցին Մովսէսին : Հրէական սուրբաւրը իւրադրեց ժամանակի եգիպտական հալածող սւամուռնը ու գիտութիւնը :

Աճեց, մեծացաւ, չափահաս դարձաւ Մովսէս :

Երկու ճանապարհ կար նրա առաջ թայ ընկած։ Մինը տանում էր նրան դեպի աշխարհային փառք, մեծութիւն, իշխանութիւն, հալլապուրթիւն, միւսը դէպի հրէական ազգի հալածութիւն, խեղճ, թշուառ ու անապահներով լի պիճանի ու կաղկթիւն։

Մէկի համար սնուցել, պատրաստել ու հաս-
ցրել էր Խորհրդանական կեանքը, գիտուն աւսու-
ցիչները, պիտամեծների նիստ ու կացը, միւսի

համար մրմնջողել էին նրա ակահիշներին Հրէ-
ուհու օրօրները, խօսել էին նրա սրտին սարն-
տու թխան, գալիսակուխտան տակ ծածկուած
մայրութիւնը, համայնի էին նրա հողին լոկի
մնիկ ասանձնութիւնների մէջ, հնձկտանքների
խեղդուկներով աստուած-մօր պատմած իր ազգի
տառապանքներն ու գարգարանքները . . .

Մի ճանապարհը ծայրի ու ծիծաղ էր բուրում,
փառք ու իշխանութիւն էր խոտտանում, միւսը
դէպի վիշտ ու հալածանք, դէպի բանտ ու մահ
էր առաջնորդում :

Մի ճանապարհի ծայրին կանգնած էր Փա-
րաւն իր արքունիքով, իր փառքով ու մեծու-
թիւններով, իր յայտուցիչ պաշտօններով, իր
բոլոր գիտուն խորհրդակցանքներով ու իմաստա-
սէրներով, միւսի ծայրին մի վարձկան գոյակ, մի
սպասաւոր կին, մի ցաւատանջ հրէուհի իր
միայն ու միայն մայրական սրտով ու գորու-
վով :

Մի կողմի Փարաւնի ազնիւկը՝ իր խնամակա-
լուհին էր ծայրունիների ծայրիկներ փառւմ, համ-
բոլորների մարդարիտներ թափում, միւս կողմը
սմբած ցամաքած հրէուհու աղի աղի այրուելը-
ներս էին հրէական արշուանքների անյատակ
ծովի մէջ թափուում . . .

Մովսէս գալթիւրդ երեսը արգունիքից եւ
նետուցի մայրենի չըջանք :

Մովսէս ձգել օտարի փառք ու մեծութիւնը
եւ գնաց դէպի իր եղբայրների թշուառութիւնը
Մովսէս գնաց իր արեւնակիցների տառա-
պանքներին ընկերայաւ :

Եւ մուշուրիւնը տարաւ իր անշրջակ յաղ-
թանակը :

IV

Մի գեղեցիկ տղամարդ էր Մովսէս . բարձր
հասակով, քալառողջ մարմնով, գիտուն զը-
խով, խորթափանջ մտքով, իւրայինների ցա-
ւերով, բարբախող սրտով, իր ազգի փրկութեանը
նուիրուած հոգով :

Ասային իսկ անգամից չկարողացաւ հան-
գուցիւն եղբայրացու անօրէն եւ տմարդի վա-
նուշեք իր մի խեղճ հրէայ եղբոր հետ : Եւ մի
հաւուածով զետեւ գլորեց եղբայրացու անշըն-
չացած :

Չէ՛, Եգիպտոս ազատ մտածող, համարձակ
գործող երիտասարդ հրէայի տեղը չէր. նա եր-
կար չէր կարող անպատիժ մնալ այնտեղ. ուս-
տի պէտք էր հետանալ Եգիպտոսից եւ նա փա-
խաւ Մագիբաու երկրից :

Խնայարած էր Մովսէս . ընտանեաց տէր,
գաւազների հայր, Ապրում էր ազատ բնութեան
մէջ ազատ պայմաններում, ո՛չ բանութիւն, ո՛չ
հաւածանք, ո՛չ կաշկանդանք նրա հովական
կեանքն էր վրդովում :

Բայց տխուր ու տրտում էր Մովսէս : Իր
ազգակիցների վիշտ ու չարախաղքը միշտ ու
միշտ իր հետն էին անբաժան թէ՛ ասան իր ըն-
տանկան համեստ ծածքի տակ, թէ՛ զուրքը

ազատ զայտերում ու հովիտներում, թէ՛ լեռ-
ների լանդիքում ու կասաթների վրայ եւ թէ՛
ջրերի հանգստաւէտ ավերներում :

Ճարիների անկող՝ անուռ էր սրտի մէջ եւ
սէրն իր ազգի :

Եղբայրներից, այդ գերութեան վայրից իր
ազգն ազատելու միջոցն էր, որ բուն էր դրած
նրա սրտի խորքում . օր օրի վրայ զօրանում
էր այդ միտքը. եւ նա առգործում էր այդ միտ-
քով, անբաժան էր այդ մտքից թէ՛ քուն, թէ՛
արթուն :

Ինչ կը կրակներ էին միտում ու ծխում նրա
սրտի մէջ եւ այրում նրա ամբողջ էութիւնը :
Իր կեանքի ազատ պայմանները, ընտանեկան
հոգսերը, զանակների ողջազուրանքը չէին կա-
րողանում հանգչելու նրա սրտի մէջ իր ազգա-
կիցներին, իր արեւնակիցներին չարատանջ կա-
ցութեանը նշուլող կայծերը :

Ճարիների անկող՝ անուռ հրահրում էին
նրա սրտի մէջ այդ կայծերը :

Ու թառն տարեկան պատկառելի ծերունի էր
Մովսէս, բայց ոչ մի կնիւն, ոչ մի խորշում
չէր համարձակուել տեղ գտնել նրա ճակատին :
Ճարիների անցում էին, բայց սրտի մէջ այրու-
վող անկէղ բողբոյ իր ազգակիցներին ազատելու
զագափարով տողորդուած հողին չէին ներում
տարիներին հետքեր թողնելու նրա ճակատի
վրայ :

Վերջապէս տարիների ընթացքում հրահր-
ւած կայծերը գնալով զօրեղացան եւ կրակ
կարեցին Մովսէսի սրտի մէջ, բռնկեցին, վառ-
ուեցին, մի անագին հրդեհ առաջ բերին բնու-
թեան ազատ ծոցում Գորէք լեռան վրան :

Վառվում էր վառվում մորենու թուփը —
Մովսէսի սիրտը, բայց չէր նա այրվում, մոխիր
չէր դառնում :

Ննդուցեց, զարմացաւ, ապից, հրացաւ Մով-
սէս իր նկրտի աշխարհի կենդանին հանդիսաւո-
րութեամբ կրակ կտրած այդ պատկերի, այդ
այրուող մորենու առաջ :

Սուրբ էր, վսեմ էր, երկնային էր, աստ-
ուածային էր այն տեսարանը — այն պատկերը :

Ու զեղ մօտենալ . բայց նախապէս հրաման
առաւ հանելու, ղէն ձգելու իր սուքերի փոշոտ
կոշիկները : Եւ նա վանեց, վաճեց, ղէն ձգեց
սրտից անձնական հողեր ու պէտքեր, անձնա-
կան շահեր ու ձգտումներ, իբրեւ փոշոտ կո-
շիկներ, եւ այնպէս մօտեցաւ երկրպագելու
սուրբ Մորենուն, անկէղ Մորենուն — հրէա-
կան ազգի բոցակիզում տառապանքների այդ
թուփին, այդ հրդեհին :

Մովսէս ձայնը լսեց կրակի միջից :

Մասօք էին այդ ձայները, հարազատ էին,
մերձաքող էին, սիրելի էին Մովսէսին այդ ձա-
յները : Համակ ունկնդրութիւնը դարձած՝ լաղեց
իր հոգու բոլոր ուժերը — ահ — ճանաչեց
Մովսէս : Այդ ձայները իր մօր ձայնին չէին,
որ երբեմն՝ իբրեւ խեղճ օրօրներ, իբրեւ
հրէատանջ սրտի մօրմոքներ, իբրեւ վշտի մե-
ղեղներ, իբրեւ հոգեսարստիկ աղօթքներ ու

միմուսները երգվում էին իր մնարի մօտ եւ, իր սրտի միջից ակօսելով, իր ներքին զգացումների ողորկում, անցնում թուշում էին դէպի Ենովայ եւ այժմ, Ենովայից անդրադառնալով, խօսում էին կրակի միջից — բողբոջի միջից — « Մովսէ՛ս, Մովսէ՛ս, քս ազգակիցների տառապանաց չափը լցուած է . . . նրանց աղաչանքի ու պաղտաւորի ձայները երկիրը են հասնում . . . գնա՛, գնա՛, քո եղբայր Անարծի հետ եւ նրանց աղափոր . . . »

Երկրպագեց Մովսէս իր ազգակիցների ցաւերի այդ հրդեհին, հնազանդեց բողբոջի խօսող ձայներին, հոգու բոլոր զօրութիւնները ողջագութեց իր մօր քաղցր շունչն ու յիշատակը, ցըրուեց ձիգ ձիգ տարիներով իր մարի եւ գոյութեան վրայ տիրող շամանդաղը եւ նոր ու նոր հոգի առած՝ վերցրեց գաւազանը եւ քնկերացած իր մեծ եղբայր Անարծիի հետ՝ նորից դէպի Եղիպատոս վերադարձաւ, իր թշուառ ժողովրդին երևալը, շարժեց նրա թմրած հոգին, խօսեց նրանց, ուրիշ հանեց նրանց :

Մովսէս ու Անարծի, երկու հարազատ եղբայրներ, գլուխ կանգնեցին իրենց դժբաղդ ազգակիցներին, հանդէս կան ժամանակի Փարաւոնին, եւ իրենց ժողովրդին աղաւթ թողնելու խնդիրը յուզեցին, պահանջեցին, պաշտպանեցին այնքան, մինչեւ որ եղիպատական գլուխ թեւան անարգ լուծը թօթափեցին, ստրկութեան շղթաները կտորատեցին եւ Հրէութիւնը աղափորեցին :

Եւ մայրութիւնը տարաւ իր երկրորդ եւ վախճանական յայրանակը :

Մ. ա.-ը. ՄԵԼԵԱՆ

1 Յունվ. 1905, Պարիզ

ԹԻՔԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՏՈՐՆԵ

(Շարունակութիւն եւ վերջ)

ԵՐՐՈՐԴ ԾՐՋԱՆ(1)

Օսմանեան երաժշտական թատրոնին պատմութիւնը այնքան սերտօրէն կապուած է իր զբաղման թատրոնին պատմութեան հետ, որ անկարելի է անոր մասին չխօսիլ հոս :

(1) Պ. Թալասօյի յօդուածին այն մասը որ «Անահիթ»ի վերջին թիւով հրատարակուեցաւ, կը կէտ հետեւեալ տիպոսը «Մերկորդ օրացն. — քրիստոնէական վարպետները», որ մոռցուած էր մեր քաղցրահամբեր մէջ : — Այս թիւով հրատարակուած պատկերները առած են Revue Théâtrale-ն :

Շատ առաջ Անմէտ Միտհաթէն, որ գրած է Զեյնալիքեր, Զեհնիլի եւ Զիպաի դուստները թիւները, երաժշտութիւնը մտած էր օսմանեան թատրոնին մէջ . անշուշտ՝ արեւելեան երաժշտութիւնը, որ ա՛յնքան տարբեր է եւրոպականէն :

Այստեղ, բոլոր փառքը կը պատկանի Հայոց մը, Տիգրան Զուհանեանին :

ՏԻԳՐԱՆ ԶՈՒՀԱՃԵԱՆ. — Ծնած Պոլիս 1840ին, Տիգրան Զուհանեան իր առաջին երաժշտական ուսումնասիրութիւններն ըրաւ Տաճ-



Տիգրան Զուհանեան

կաստանի մէջ. Յետոյ գնաց իր արուեստը կառարելապէս ուսանիլ Իտալիա, Միլանի Գոնսերվատորը, իր առաջին գործը եղաւ Արշակ, օփերա՝ չորս արարուածով, զոր նշանաւոր արուեստագէտները ներկայացուցին Նաուսի Թատրոնին մէջ : Այդ սկզբնաւորութեան գտած շատ մեծ յաջողութիւնը զինքը քաջալերեց ամբողջապէս անձնատուր ըլլալու այդ անպարզելի որ Արեւելքի երկիրներուն մէջ ապերախտ է եւ անշահաբեր :

Իր երկրորդ գործին — Օլիմպիալի — շատ մը կտորները Վիեննայի եւ Նախովիի նուագահանդէսներուն մէջ զարնուելով՝ շուտով տա-